

«Զ»



«Մշակույթի նախարարի հրամանի 2012թ. N 5144»

**Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՆԵՐՔԻՆ ԱՌԴԻՏԻ
ԲԱԺՆԻ**

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) աշխատակազմի (այսուհետ՝ Աշխատակազմ) ներքին աուդիտի բաժինը (այսուհետ՝ Բաժին) Աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանում է:

2. Բաժինը իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, Հայաստանի Հանրապետության օրենքներով, Հայաստանի Հանրապետության Նախագահի հրամանագրերերով, Հայաստանի Հանրապետության կառավարության և վարչապետի որոշումներով, Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարի (այսուհետ՝ Նախարար) հրամաններով և սույն կանոնադրությամբ:

3. Բաժինը կազմավորում, վերակազմակերպում և նրա գործունեությունը դադարեցնում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

4. Բաժնի կանոնադրությունը, կառուցվածքը հաստատում /փոփոխում/ է Նախարարը:

5. Բաժինը ղեկավարում է բաժնի պետը:

II. ԲԱԺՆԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

6. Բաժնի խնդիրներն են՝

1) ներքին աուդիտի ենթարկել նախարարության գործունեության ֆինանսական կառավարմանը, հսկողությանն առնչվող գործառույթները:

2) ապահովել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ իրեն վերապահված լիազորությունների լիարժեք և արդյունավետ իրականացում՝ համաձայն ներքին աուդիտի ստանդարտների, ներքին աուդիտորների վարքագծի կանոնների:

III. ԲԱԺՆԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

7. Բաժինն իր խնդիրներին համապատասխան իրականացնում է հետևյալ գործառույթները՝

1) գնահատում է ֆինանսական կառավարման, հսկողության համակարգերի արդյունավետությունը և համապատասխանությունը օրենսդրության պահանջներին.

2) օժանդակում է ռիսկերի բացահայտմանն ու գնահատմանը.

3) պատրաստում և Նախարարին ու ներքին աուդիտի կոմիտեին է ներկայացնում ներքին աուդիտի կանոնակարգի նախագիծը, ներքին աուդիտի ռազմավարական և տարեկան ծրագրերը.

4) ապահովում է գործունեության ընթացքում կամ արդյունքում հայտնի դարձած տեղեկությունների գաղտնիությունը՝ բացառությամբ օրենսդրությամբ նախատեսված դեպքերի.

5) մշակում և կազմում է կատարման ենթակա աուդիտորական առաջադրանքները.

6) կազմում և Նախարարին ու ներքին աուդիտի կոմիտեին է ներկայացնում ներքին աուդիտի տարեկան հաշվետվությունը.

7) հետևում է ներքին աուդիտի տարեկան ծրագրի կատարմանը և ներքին աուդիտի մեթոդաբանության իրականացմանը.

8) անհրաժեշտության դեպքում, խորհրդակցելով լիազոր մարմնի հետ, մշակում է առանձին մեթոդաբանություն Բաժնի գործունեության համար.

9) Բաժնի գործունեության ընթացիկ ուսումնասիրությունների՝ ներքին գնահատումների միջոցով իրականացնում է աուդիտի որակի երաշխավորման ծրագիր՝ անհրաժեշտության դեպքում ներգրավելով նաև արտաքին խորհրդատուների:

10) կազմում է հաշվետվությունն աուդիտի արդյունքների և արձանագրված խնդիրների, արված առաջարկությունների և ձեռնարկված գործողությունների մասին.

11) կազմում է հաշվետվությունն ներքին աուդիտի տարեկան գործունեության ծրագրի իրականացման մասին.

12) Նախարարին ներկայացնում է առաջարկություններ ներքին աուդիտի իրականացման համար անհրաժեշտ և օգտագործված ռեսուրսների մասին: